

«Միություն»-ը և լոբբիզմը

## Ի՞նչ է «Ադրբեջանի հետ կապ»-ը, եվ n<sup>o</sup> վ էր դրան մասնակցում

Հօգուտ Ադրբեջանի գործողության մեջ մտնելու պատճառով «Միության» պատգամավորները խնդիր դարձան իրենց կուսակցությունների համար: Ինչպես սկսվեց Ադրբեջանի ազդեցության պատմությունը Գերմանիայում և Եվրոպայում. վերակառուցում:

Ռայնհարդ Վեգեր



*Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը (կենտրոնում), նրա կինը՝ Ադրբեջանի փոխնախագահ Մեհրիբան Ալիևան (աջից), և նրանց համատեղ դուստրը՝ Լեյլա Ալիևան*

2006 թ. ամռանը գործարկվեց գրեթե 1800 կմ երկարությամբ նավթամուղը, որը Բաքվից Թբիլիսիով ձգվում է դեպի Թուրքիայի միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստ: Ադրբեջանի համար իր կարճ պատմության մեջ՝ որպես անկախ պետություն, դա երկար սպասված շրջադարձ էր. դրանով նրա հարուստ հանքավայրերից նավթը վերջապես կարող էր հասնել համաշխարհային շուկաներ: Նախորդ տարիներին միայն այս պահի հեռանկարը փոփոխել էր երկիրը, որը Խորհրդային Միության վախճանից հետո ամբողջովին ընկած էր գետնին: Ադրբեջանի անկախությունը սկսվել էր Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ տանուլ տված պատերազմով. պարտությամբ, որն ամբողջ՝ առաջ քաղաքական ճամբարների պատառոտված ադրբեջանական հասարակության մեջ ընկալվեց որպես ծանր նվաստացում: Դրանից հետո երկրի մի մասը գտնվում էր օտար վերահսկողության տակ, մոտ կես միլիոն տեղահանվածներ ապրում էին թշվառ պայմաններում՝ ճամբարներում, ավերված շենքերում և հանրակացարաններում, տնտեսությունն ազատ անկման մեջ էր:

### Հավաքագրման պատմության սկիզբը

2006 թվականից նավթը շատ փող բերեց երկրին: Բաքվում դա դեռ շուտ պետք է երևար: Եվ նավթն ու գազի խոշոր հանքավայրերի մոտալուտ շահագործման հեռանկարը կարողացան

ավելին. դրանք Ադրբեջանին տեղ ապահովեցին եվրոպական շատ քաղաքական գործիչների մտավոր քարտեզի վրա, քանի որ հենց այդ ժամանակ, ռուս-ուկրաինական գազային առաջին վեճի պատճառով, Եվրոպական միությունը (ԵՄ) ցավով գիտակցեց Ռուսաստանից իր կախվածությունը: Ադրբեջանը խոստացավ օգնել՝ դիվերսիֆիկացնելու ԵՄ-ի էներգամատակարարումը:

Մոտավորապես այս շրջանում սկսվեց պատմությունը, որի պատճառով «Քրիստոնեա-դեմոկրատական միություն»-ում (ՔԴՄ, գերմ.՝ Christlich-Demokratische Union) շատերն այսօր նյարդայնանում են՝ հենց որ խոսքը Ադրբեջանի կամ Բաքվի մասին է: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, որը հորից պաշտոնը ժառանգել էր 2003 թ., ցանկանում էր օգտագործել իր երկրի նոր ֆինանսական հնարավորությունները Եվրոպայում հեղինակություն, հարգանք և ազդեցություն ձեռք բերելու համար:

Այդ հավաքագրումը մասամբ տեղի ունեցավ միանգամայն բաց: 2006 թվականից Եվրոպական տարբեր երկրներում առաջացան կազմակերպություններ, որոնք ներկայանում էին որպես քաղաքակիրթ հասարակության մաս, ապահովված էին շատ փողով և մոտենում էին քաղաքական գործիչներին, լրագրողներին և մշակույթի գործիչներին: Դրանք կազմակերպում էին համաժողովներ, բիզնեսի օրեր և համերգներ, հրավիրում Ադրբեջան՝ ճանապարհորդության: Հիմնադրվեցին այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին է «Գերմանա-ադրբեջանական ֆորում»-ը, որում հավաքվեցին ղեկավարներ, քաղաքական գործիչներ և գիտնականներ երկու երկրներից: «Սոկար» պետական նավթային կոնցեռնը հետամտում էր ամեն կարգի մշակութային և սպորտային նախաձեռնություններին՝ որպես հովանավոր:

### **Ադրբեջանն իմիջի խնդիր ուներ**

Սկզբում այդ ջանքերը հաջողություն ունեցան: Գերմանիայում Բաքուն կարողացավ իր կողմը հակել միության առաջվա երկու՝ լավ «ցանցավորված» քաղաքական գործիչներին՝ Քրիստոնեական-սոցիալական միությունից (ՔՄՄ, գերմ.՝ Cristlich-Soziale Union) Դաշնության Ներքին գործերի նախարարության առաջվա պետքարտուղար Էդուարդ Լինտներին, որը Բունդեսթագից հեռանալուց հետո 2009 թ. հիմնեց «Գերմանա-ադրբեջանական հարաբերությունների խթանման ընկերություն» ֆիրման, և Բադեն-Վյուրթեմբերգի՝ այն ժամանակ դեռ ազդեցիկ ՔԴՄ-ից Օտտո Հաուզերին՝ կանցլեր Շելմուտ Քոլի կառավարության վերջին խոսնակին: 2010 թ. նա Շտուտգարտում բացեց Ադրբեջանի պատվավոր հյուպատոսությունը:

Լոնդոնում տեղակայված՝ Բեռլինում, Փարիզում և Բրյուսելում մասնաճյուղերով “The European Azerbaijan Society”, կարճ՝ TEAS անունով կազմակերպության ղեկավարին հաջողվեց լավ հարաբերություններ հաստատել Ֆիլիպ Միսֆելդերի հետ՝ այն ժամանակ «Երիտասարդների միության» (“Junge Union”) նախագահ, Բունդեսթագում «Միություն» խմբակցության արտաքին քաղաքականության խոսնակ և շատ դիտորդների ու կուսակից ընկերների աչքում գերմանական քաղաքականության առաջիկա աստղերից մեկը:

2010 թ. հոկտեմբերին, Պոտսդամում «Երիտասարդների միության» համագումարում, TEAS-ի ղեկավար Թալե Հեյդարովը՝ ադրբեջանական ազդեցիկ նախարարի որդին, խոսելու հնարավորություն ունեցավ: Այնտեղ նա վերընտրվելու կապակցությամբ շնորհավորեց Միսֆելդերին և զովագո արեց Գերմանիայի և Ադրբեջանի, ինչպես նաև «Երիտասարդների միության» և իր կազմակերպության միջև սեղմ հարաբերությունների համար:



*Դադիվանքը Լեռնային Ղարաբաղում*

Բայց Ադրբեջանն իմիջի ինդիր ուներ, և ավելին, քան միայն դա: Քաղբանտարկյալների, հետապնդումների ենթարկված ընդդիմադիր կուսակցությունների, ծեծված լրագրողների և կեղծված ընտրությունների մասին զեկույցներով իրավապաշտպան կազմակերպությունները հասարակության մեջ ավելի շատ հարգվեցին, քան լոբբիստները, որոնք ցանկանում էին Ադրբեջանը պատկերել որպես ժամանակակից, արտաքին աշխարհի համար բաց և ժողովրդավարության ճանապարհին գտնվող արևմտյան երկիր: Ուստի ընկերաբար պաշտոնական առաջխաղացումներն արագ սահմանափակվեցին: 2012 թ. աշնանը, երբ «Azerbaijan Student Network»-ը՝ որպես դրամական նպաստ վճարող ֆիրմա, ցանկանում էր աջակցել Բադեն Վյուրթեմբերգի երկրամասային խորհրդարանի «Երիտասարդների միությանը», մայր կուսակցությունը ստիպեց երկրամասի՝ «Երիտասարդների միության» այն ժամանակվա ղեկավար Նիկոլաս Լյոբելին վերադարձնել գումարը: ՔԴՄ-ն երկյուղում էր անվանը ծանր վնասից:

Եվ ոչ միայն քաղաքական կուսակցությունները մերժեցին Ադրբեջանի փողը. 2014 թ., երբ Ռեյնլանդ-Պֆալցիայի Օպենհայմի քաղաքապետ և Բունդեսթագի «Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության» (ԳՄԴԿ, գերմ.՝ Sozialdemokratische Partei Deutschlands) պատգամավոր Մարկուս Հելդը ցանկանում էր «Սոկար» նավթային կոնցեռնի նվիրատվությունը փոխանցել Դեքսիելյո փոքրիկ ավանի մարզական ակումբին, ակումբի ղեկավարությունը մերժեց: Մարզիկները նախընտրում էին ջանասիրաբար շարունակել փոքր նվիրատվություններ հավաքել իրենց տեղանքի նոր սիգամարգի համար:

### **Բարուն ազդեցություն ունի Եվրոպայի խորհրդում (ԵԽ)**

Այդ խնդրին հակազդելու՝ Ադրբեջանի վարչակարգի փորձը տանում է դեպի Ստրասբուրգ և Եվրոպայում նրա ազդեցության ձգտման մութ կողմը: Ստրասբուրգում է ԵԽ-ի՝ 1949 թ. հիմնադրված պետական կազմակերպության նստավայրը: Այն իրեն համարում է ժողովրդավարությունների «ակումբ», և իր հիմնական խնդիրը տեսնում է անդամ պետություններում մարդու իրավունքների և օրենքի գերակայության պահպանմանը հետևելու մեջ:

Ադրբեջանը, չնայած բազում կասկածներին, ընդունվեց 2001 թ.: Այն հետամտել էր այդ անդամակցությանը՝ որպես հեղինակության ձեռքբերում, գործնականում, սակայն, պայքարում էր դրա հետ իր միանալուց սկսած, քանի որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄՎ)՝ Ադրբեջանում դրության մասին պարբերական զեկույցներում սկզբից ևեթ ներկայացվում էր երկրում մարդու իրավունքների վիճակի

անգարդ պատկերը: Զեկույցները հնչում էին ոչ պետական իրավապաշտպան կազմակերպությունների բողոքների նման, բայց ունեցեին պաշտոնական կնիք:

Էքստեն կարգով մուլտիմեդիա բովանդակությունը տեսնել կարողանալու համար պահանջվում է Ձեր միանգամյա համաձայնությունը: Խնդրում ենք մեր տվյալների պաշտպանության հայտարարագրում ուշադրություն դարձրել մեր տեղեկություններին, նաև՝ տեղադրված քուքիներին և Ձեր ընտրանքներին:

Համաձայնել

LIVE ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

4.781 ՔՎԵ

Կկայունանա՞՞ ՔԴՄ-ն Բունդեսթագի ընտրություններից առաջ

Frankfurter Allgemeine Zeitung

Այո, ենթադրում եմ

Ոչ, ՔԴՄ-ն

կտուգանվի նաև

Բունդեսթագի

ընտրություններում

Խորհրդարանական վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակությունը վաղ փորձում էր ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե որ պատգամավորներն էին նշանակվելու Ադրբեջանի զեկուցողներ: Եվ շատ փաստանշաններ խոսում են այն բանի օգտին, որ Ադրբեջանը մոտավորապես այն ժամանակ, երբ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի շնորհիվ փողը սկսեց հոսել երկիր, մեծամասնության համար նորմալ գովազդից անցավ քվեներ գնելուն:

Առաջին անգամ հանրային դարձավ “Think Tank”-ի «Եվրոպական կայունության նախաձեռնության» 2012 թ. զեկույցը՝ «Խավիարային դիվանագիտություն» խորագրով: Անանուն ադրբեջանցի ինսայդերների հաղորդագրությունների և Խորհրդարանական վեհաժողովում որոշումների կայացման գործընթացների մանրակրկիտ ընդօրինակման հիման վրա ցույց տրվեց, թե ինչպես էր Ադրբեջանը թանկարժեք նվերներով, հրավերներով, արձակուրդային ուղևորություններով և այլ զիջումներով կառուցել ԵՄ անդամ պետություններից աջակիցների մի ցանց, որոնք Ստրասբուրգում հետզհետե առաջ էին շարժվում դեպի վճռողական դիրքեր:

**Խարդավանքների և զրպարտությունների արշավ**

ԵՄ-ում ադրբեջանական ազդեցության գազաթնակետին այս խումբը դարձավ ժողովի նախագահ՝ մեծամասնությունն նրա նախագահությունում և մի քանի խմբակցության նախագահ: Գնման այս ինտերնացիոնալը չսահմանափակվեց քաղաքական մեկ ճամբարով: Դրանում միավորվեցին իսպանացի, իտալացի և գերմանացի քրիստոնեա-դեմոկրատները, բելգիացի, ֆրանսիացի և բրիտանացի լիբերալները, լեհ սոցիալիստները և շատ ուրիշներ:

Գերմանիայից դրան էր պատկանում Քարլսրուեի ՔԴՄ պատգամավոր Ակսել Ֆիշերը, որի դեմ Մյունխենի գլխավոր դատախազությունը հետաքննություն էր վարում մարտի սկզբից՝ կասկածելով, որ նա փողի դիմաց նպաստել է Ադրբեջանի օգտին որոշումների կայացմանը: Տարբեր ժամանակներում Ֆիշերը գերմանական պատվիրակության ղեկավարն էր, քրիստոնեա-դեմոկրատական «Եվրոպական ժողովրդական կուսակցություն» (ԵԺԿ, գերմ.՝ Die Europäische Volkspartei) խմբակցության նախագահը և ժողովի փոխնախագահը: Նման մեղադրանքների պատճառով, որոնք առաջադրվել էին Ֆիշերին, դեռ մեկ տարի առաջ Ֆրանկֆուրտի դատախազությունը հետաքննություն էր սկսել ՔԴՄ քաղաքական գործիչ՝ Մեքլենբուրգ-ֆորպրոմմենցի Կարին Շթրենցի դեմ, որը մահացավ մեկ շաբաթ առաջ:

Այնտեղ, որտեղ դրական խթանները միայն չէին բավարարում, Ադրբեջանի վարչակարգը դիմում էր նաև այլ միջոցների: Այն բանից հետո, երբ 2009 թ. Բունդեսթագի ԳՄԴԿ պատգամավոր Քրիստոֆ Շթրենսերին հանձնարարվեց «Ադրբեջանի հետ կապ»-ի կամքին հակառակ՝ քաղբանտարկյալների վիճակի մասին զեկույց գրել, նրա դեմ խարդավանքների և զրպարտությունների արշավ հրահրվեց: Երբ Բունդեսթագից հեռանալուց հետո 2017 թ. նա մտաբերեց դա, խոսեց «ԿԳԲ-ի մեթոդների» մասին, ինչը պարզ է, քանի որ նրա ադրբեջանցի հակառակորդների մեջ էին, իրականում, խորհրդային գաղտնի ծառայության առաջվա գործակալները:

Ադրբեջանական լրատվամիջոցներում Շթրենսերի մասին արվում էին շինծու պնդումներ, որոնք այնուհետև կրկնվում էին Խորհրդարանական վեհաժողովում պատգամավորների կողմից, կային զրպարտություններ մինչև իսկ նրա անձնականին միջավայրում, ահաբեկման փորձեր: «Դա զարգացրեց իմ գիտելիքներն այն մասին, թե ինչի են ստիպված դիմանալ վարչակարգի քննադատները Ադրբեջանում », - ասաց Շթրենսերը:

2013 թ. սկզբին քաղբանտարկյալների մասին Շթրենսերի զեկույցը Խորհրդարանական վեհաժողովում մերժվեց: Իտալացի քրիստոնեա-դեմոկրատ Լուկա Վոլոնտեն, որն այդտեղ, որպես ԵԺԿ խմբակցության նախագահ, հետին պլանում վերահսկել էր գործընթացները, այս տարվա հունվարին Միլանում, առաջին աստիճանում դատապարտվեց չորս տարի ազատազրկման. նա իր ծառայության համար Ադրբեջանից զարտուղի ճանապարհներով ստացել էր ընդհանուր մոտ 2.4 միլիոն եվրո:

Շթրենսերի զեկույցի մերժումը կարճ ժամանակով Ադրբեջանի վարչակարգին բերեց քարոզչական հրաշալի մի քանի հաջողություն: Այսպես, օրինակ, երբ կարճ ժամանակ անց Բրյուսելում ՆԱՏՕ այցի ընթացքում նախագահ Բլիսամ Ալիևը հարցման ենթարկվեց իր երկրում քաղբանտարկյալների վերաբերյալ. նա պատասխանեց, որ դրանք չկան, որ դա հաստատվել է հենց ԵՄ-ի կողմից:

**Գովազդային հարձակումն ի չիք դարձվեց**

Այնուհանդերձ, Ադրբեջանի գովազդային հարձակումը ի չիք դարձվեց, երբ ԵԽ-ն կոռումպացնելու փորձերը մի քանի տարի անց բացահայտվեցին: Շատ կազմակերպություններ, որոնք բաց ազիտացիա էին անում Բաքվի վարչակարգի համար, հետզհետե դադարեցին, քանի որ նրանք այլևս չէին կարող հասնել իրենց նպատակներին: “The European Azerbaijan Society”-ի Լոնդոնի կենտրոնակայանը, որին մի ժամանակ տիրում էր այս ընթացում մահացած՝ «Երիտասարդների միության» նախագահ Ֆիլիպ Միսֆելդերը, 2018 թ. լուծարվեց: Ըստ ֆիրմայի տվյալների շտեմարանների՝ անցյալ տարի դրա գերմանական մասնաճյուղը վերանվանվեց “Oaktree Berlin GmbH”:

Ուսանողական կազմակերպության (որը ինը տարի առաջ ցանկանում էր աջակցել Բադեն-Վյուրթեմբերգի երկրամասային խորհրդարանի «Երիտասարդների միությանը») կայք-էջում վերջին գրանցումները սկսվում են 2020 թ. ապրիլից. դրանում ուսանողներին խորհուրդ է տրվում, որ հրաժարվեն իրավասու ծառայություն մատուցողներից՝ իրենց ուսանողական աշխատանքները գրելու համար:

Ինչ մնացել է Գերմանիայում ադրբեջանական առաջվա փիար-հարձակումից, հիմնականում «Միության» կուսակցություններից այն խումբն է Բունդեսբազի պատգամավորների, որոնք տարիների ընթացքում շարունակ ադրբեջանական լրատվամիջոցների դիմաց պարբերաբար արտահայտվում էին վարչակարգի օգտին, հարցումներ էին անում Դաշնության կառավարությունը, կազմակերպում էին բիզնեսի օրեր և երբեմն ուղևորվել են Բաքու՝ անորոշ քաղաքական նպատակով:

Մինչև Ակսել Ֆիշերի դեմ հետաքննությունը և դիմակի գործի սկիզբը, մի քանի օր անց դա հազիվ ընկալվեց լայն հասարակության կողմից: Այժմ այս պատգամավորները խնդիր են դարձել իրենց կուսակցությունների համար՝ հոգուտ Ադրբեջանի իրենց ծառայության պատճառով: Թե՛ հակառակն է. նրանք բա՛ց էին Բաքվից գովազդի համար, որովհետև առանց այդ էլ հակում ունեն դեպի բիզնեսը, որը քաղաքացիների աչքում խնդիր է:

ՔԴՄ պատգամավորներ Նիկոլաս Լյոբելի և Մարկ Հաուպտմանի դիմակի բիզնեսը ոչ մի կապ չունի Ադրբեջանի հետ: Իսկ ԳՄԴԿ-ի ներկայացուցիչ Մարկուս Հելդը, որը մի ժամանակ ցանկանում էր ադրբեջանական «Սոկար» նավթային կոնցեռնի միջոցով ֆինանսավորել մի մարզահրապարակի, Մայնցում կանգնեց դատարանի առաջ՝ Օպենհայմի քաղաքապետի իր առաջվա պաշտոնում կաշառման, կաշառվածության, խարդախության և անհավատարմության պատճառով:

Ադրբեջանի կառավարիչ Իլհամ Ալիևի համար, ամենայն հավանականությամբ, այդ տղամարդկանց ճակատագիրը միևնույնն է: Նա այլևս նրանց կարիքը չունի: Նրա ազդեցության քաղաքականության առանցքային նպատակը միշտ եղել է Լեռնային Ղարաբաղի շուրջ տանուլ տված պատերազմից հետո Եվրոպայում այս հակամարտության պարզաբանման քարոզչական ճակատամարտը շահելը: Բայց նավթի փողերով Ադրբեջանը գնել է ոչ միայն պատգամավորներ, այլև՝ շատ մեծ մասշտաբի զենք: Հիմնավորմամբ, որ միջազգային հանրությունը ոչինչ չի ձեռնարկել, Ալիևը անցած աշնանը նոր պատերազմ սկսեց Ղարաբաղի համար, որից նրա երկիրը դուրս եկավ որպես հաղթող:

Աղբյուր՝ «Frankfurter Allgemeine Zeitung» (<https://www.faz.net/-gpg-aa1pp>)